

## ԱՆՁԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԽՈՍՔԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ԴԱՎԹՅԱՆ

*Խ. Աբովյանի անվ. ՀԴՄՀ և ԳԴՀ դասախոս*

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Խ. Աբովյանի անվ. ՀԴՄՀ հոգեբանության ամբիոնի հայցորդ*

Անձի սոցիալականացումը և խոսքի զարգացումը սերտորեն փոխկապված են: Այս հոդվածի շրջանակներում մենք փորձել ենք բացահայտել այս խնդրին առնչվող մոտեցումներն ու պարզել փոխկապվածության առանձնահատկությունները և զարգացման փուլերը: Այս առումով, կարևոր է անձի հոգեկանի և խոսքի զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրությունները, որոնք հնարավորություն կտան, այդ ոլորտի հապաղումների պատճառահետևանքային կապերի բացահայտման և դրանց կանխարգելման միջոցով, գտնել այն հնարները, որոնք կարող են նպաստել երեխայի սոցիալականացման պայմանների ապահովմանը:

Ճանաչողության տեսության համաձայն՝ սոցիալականացման գործընթացը գնում է անհատականից դեպի սոցիալականը, և զարգացումը ընթանում է կյանքի պայմաններին հարմարվելու պրոցեսում: Ժ. Պիաժեն առանձնացնում է զարգացման, սոցիալական կյանքի հարմարման երկու կարևոր օղակ՝ յուրացում և կիրառում: Մեծահասակի հետ շփումը նա դիտում է որպես հարմարման և յուրացման միջոց: Նա համատեղ գործունեությունը դիտարկում է դիրքային տեսանկյունից, ըստ որի՝ հասակակիցների հետ համագործակցությունը նպաստում է մանկական եսակենտրոնության քայքայմանը և նպաստում ճանաչողական և հաղորդակցման ոլորտների զարգացմանը:

Հոգեկանի զարգացման մի շարք տեսություններում (բիհեվիորիստական, ճանաչողական) զարգացումը միշտ ներկայացվում է որպես երեխայի և մեծահասակների, երեխայի և հասակակիցների հետ շփման արդյունք, բայց այն չի դիտվում որպես հատուկ հետազոտման առարկա: Ա. Մուդրիկը զարգացումը դիտում է որպես մարդուն բնորոշ հատկանիշների, նրա ներունակային հակումների (ներքինին հատուկ) իրացում: Ջարգացումը նա դիտում է որպես սոցիալականացման արդյունք:

**Սոցիալականացում** հասկացության հեղինակ է համարվում ամերիկացի սոցիոլոգ Ֆ. Գ. Գիդդինգսը, որը 1887թ. «Սոցիալականացման տեսություն» գրքում օգտագործել է այն մոտավորապես այս իմաստով.

- սոցիալականացումը անձի սոցիալական բնույթի կամ բնավորության զարգացումն է,

- սոցիալականացումը մարդու պատրաստումն է հասարակական կյանքի համար:

Եթե ինչ-ինչ էական խնդիրներ, այդ թվում նաև խոսքի զարգացման ոլորտում, մնում են չլուծված, սոցիալականացման այս կամ այն փուլում, ապա այն անմիջական ազդեցություն է ունենում անձի ամբողջական սոցիալականացման վրա: Հնարավոր է նաև, որ որևէ չլուծված խնդիր ինչ որ փուլում մնա աննկատ, սա-

կայն այն կբացահայտվի որոշ ժամանակ անց՝ կախված կենսական միջավայրի կամ իրավիճակների փոփոխություններից: Այդ իսկ պատճառով երեխայի սոցիալականացման գործընթացը անբակտելիորեն կապված է նրա խոսքային հաղորդակցական կարողությունների ձևավորման հետ:

Անձի սոցիալականացումը տեղի է ունենում հեզեբանական և սոցիոգեբանական հետևյալ մեխանիզմներով.

- **Իմպրինտինգ** (տպավորությունները). մարդու ենթագիտակցության մեջ դրոշմված կենսականորեն կարևոր օբյեկտների՝ ծնողների, հարազատների, հարևանների և այլն, ազդեցության վրա կենտրոնացումն է: Հատկապես դրանք կուտակվում են մանկության շրջանում և ձգվում մինչև հասունացում: Խոսքային հաղորդակցումն այս ընթացքում որոշիչ և կարևոր դեր է կատարում երեխայի կողմից մեծահասակի խոսքի յուրացման համար:

- **Էքզիստենցիալ (գոյության) ճնշում**. անձի կենսական պայմանների ազդեցության ներքո, ինչպես նաև, տվյալ սոցիումում գոյությունը պահպանելուն ուղղված հասարակական նորմերի յուրացումն է: Խոսքային հաղորդակցման միջոցով երեխային է փոխանցվում ավագ սերնդի փորձն ու գիտելիքները, որոնք երեխան յուրացնում է ընտրողաբար. այն ինչ նրան անհրաժեշտ է իր գոյության բանական պահանջմունքի համար:

- **Նմանակում**. կամավոր և ակամա հետևելը որևէ օրինակի, վարքագծի ձևի, որի հետ մարդը բախվում է շփման շրջանակների ընդլայնման ընթացքում, այդ թվում ՁԼՍ-ների կողմից առաջարկված:

- **Իդենտիֆիկացում** (նույնացում). անձի կողմից որպես իր անձնականի՝ ազդեցիկ անձանց կամ ռեֆերենտ խմբերի նորմերի, դրվածքների, արժեքների, վարքագծային մոդելների յուրացման հուզաճանաչողական գործընթացն է: Այս գործընթացում երեխան սկսում է յուրացնել նաև լեզվական առանձնահատկությունները, ոճը:

- **Ռեֆլեքսիա** (ներքին երկխոսություն). մարդը դիտարկում, գնահատում, ընդունում կամ մերժում է այս կամ այն արժեքները, որոնք բնորոշ են հասարակական տարբեր ինստիտուտներին, հասակակիցներին, ճանաչված անձանց (7, էջ 18-19):

Հոգեկանի զարգացման գործոնները մարդու զարգացման հիմնական դերակատարներն են (պատճառները): Դրանք են ժառանգականությունը, միջավայրը և անձի ակտիվությունը: Եթե ժառանգականության գործոնի գործողություններով որոշվում են մարդու անհատական, իսկ միջավայրով անձնավորության սոցիալական հատկանիշները, ապա անձի ակտիվ գործողությունը պայմանավորված է այդ երկու գործոնների փոխներգործությամբ: Որպեսզի կարևորենք սոցիալական գործոնի դերը հոգեկանի զարգացման գործում, սովորաբար ասում ենք, որ մարդ ոչ թե ծնվում ենք, այլ՝ դառնում: Այստեղ տեղին է հիշել Շտերնի 2 ֆակտորների կոնվերգենցիայի տեսությունը, որտեղ նա նշում է, որ հոգեկանը արտաքին գործոնների հետ ներքին տվյալների ակտիվ զուգամերձեցման արդյունք է: Ընդհանրապես միջավայր ասելով նկատի ունենք բնական և սոցիալական միջավայրերի ամբողջությունը:

Վարքի բոլոր ձևերը, հոգեկան բոլոր հատկություններն ու ընդունակությունները երեխայի կողմից ձեռք են բերվում վաղ մանկական տարիքից, երբ նրան

սովորեցնում են քայլել, առարկաների հետ գործողություններ կատարել, տեսնել, լսել, դիտել, ճանաչել և մտապահել: Դեռևս անցած դարի կեսերին գիտնականներն ինտենսիվորեն ձեռնամուխ եղան անձի հոգեկանի զարգացման, դրա տարբեր գործառնական կապերի միջև փոխկապվածության գիտական հետազոտություններին:

Լեզվաբանական գիտությունների որոշակի «անտրոպոցենտրիզմը» (մարդակենտրոնությունը), որին հատկապես ուշադրություն է դարձվում վերջին տարիներին՝ հոգեբանամանկավարժական գիտությունների համակարգում, դրսևորվում է մարդու մասին մյուս գիտությունների հետ ակտիվ փոխկապվածության շրջանակներում: Այս մոտեցումը հանգեցնում է նախկին «համակարգված» հասկացությունների վերաիմաստավորման և նորերի առաջացման, որոնց թվին են պատկանում **լեզվական գիտակցությունն ու հաղորդակցական վարքագիծը**, որոնց միջոցով բացահայտվում է լեզվաբանության «կլասիկ դիադան»՝ Լեզուն և խոսքը: Այս և նման հասկացությունները կիրառվում են երեխայի՝ Լեզվի միջոցով կառուցվող սոցիալական հարաբերությունների մեջ մտնելու գործընթացի խորքային ուսումնասիրությունների ժամանակ: Նշված գործընթացների ուսումնասիրության հիմքում ընկած են տարիքային և զարգացման հոգեբանության դասական ու ժամանակակից հետազոտությունները (Լ. Ս. Վիգոտսկի, Ա. Ն. Լեոնտև, Ա. Ռ. Լուրինա, Դ. Բ. Էլկոնին, Պ. Յ. Գալպերին, Մ. Ի. Լիսինա, Ա. Ա. Լեոնտև և ուրիշներ), որոնցում, մասնավորապես, դիտարկվում է խոսքային հաղորդակցումը՝ որպես գործունեության տեսակ:

Չայտնի է, որ խոսքային հաղորդակցումը՝ որպես գործունեության տեսակ, անհատի կողմից որոշակի աշխարհընկալման ձևավորման գործընթացն է, որը միջնորդավորվում է Լեզվով և արտացոլվում է դիսկուրսում (երկխոսություն): Չետևաբար, հաղորդակցման ընթացքում Լեզվական գիտակցությունը կարելի է դիտել որպես կողմնորոշիչ գործառույթ, քանի որ այն հնարավորություն է տալիս բացահայտել համապատասխան առարկայական բովանդակությունը, որի վրա անհատը, գիտակցաբար կամ անգիտակցաբար, կողմնորոշվում է խոսքային գործողություն իրականացնելիս:

Դիսկուրսը միաժամանակ և՛ պրոցես է, և՛ անհատի խոսքային հաղորդակցման (հաղորդակցական վարք) արդյունք:

Խոսքային հաղորդակցման սուբյեկտը պարզելու համար ներմուծվել է «Լեզվական անհատ» կատեգորիան (*языковая личность*), որը սովորաբար համադրվում է «նշակութալեզվական և հաղորդակցական գործունեության գիտելիքների, որոշիչների և վարքային հակազդումներ կրողի» հետ:

Ըստ հայտնի ռուս լեզվաբան Յու. Ն. Կարաուլովի՝ Լեզվական անհատը ներառում է հոգեբանական, սոցիալական և էթիկական բաղադրիչներ: Նա ընդգծում է «անհատականացման գործընթացների Լեզվական ուղեկցման, օնտոլինգվոգենեզի սկզբունքների ուսումնասիրության անհրաժեշտությունը, որոնք ապահովում են մարդու կատարելագործման և դաստիարակության Լեզվական կողմը» (2, էջ 6-7):

Այսպիսով, այսօր Լեզվաբանության խնդիրներից է անձնավորության, որպես Լեզվական անհատ ձևավորելու գործընթացի ուսումնասիրությունը:

Ըստ Վ. Ա. Մասլովի՝ «անձնավորության» որպես Լեզվական անհատ ձևավոր-

վելու հիմնական միջոցներից է սոցիալականացումը: Այս դեպքում խոսքը գնում է անհատի սոցիալականացման ամբողջական պրոցեսի (ինկուլտուրիզացիա) լեզվական բաղադրիչի մասին, որն ուղղված է նրա մշակութային և սոցիալական «վերափոխմանը»՝ խոսքային հաղորդակցման յուրացման միջոցով (6):

Ընդհանուր առմամբ լեզվական սոցիալականացումը անհատի կողմից խոսքային հաղորդակցման յուրացման գործընթացն է, որը դրսևորվում է տվյալ սոցիումում մատչելի դիսկուրսների տարբեր տիպերում:

Հոգեբանական տեսանկյունից վերջիններս դրսևորվում են որպես յուրօրինակ սոցիալական դերեր, որոնք յուրացնում է անհատը՝ զարգանալով որպես լեզվակիր անձ: Այս դեպքում սոցիալական փոխհարաբերությունների պայմաններում խոսքային հաղորդակցման յուրացման գործընթացների ամբողջական ուսումնասիրությունը պետք է ներառի ոչ միայն տարիքային հոգեբանական, այլև սոցիալ-հոգեբանական ասպեկտները:

Լեզվական սոցիալականացման բովանդակության բացահայտման միջոց կարող է դառնալ լեզվաբանական, լեզվամշակութային հասկացությունների հաջորդական կոնկրետացումն ու հոգեբանական ինտերպրիտացիան, որոնք արտացոլում են տվյալ գործընթացի հաղորդակցական խոսքային առանձնահատկությունները: Այդ նպատակով Ն. Ն. Նեչաևը իր կատարած աշխատանքներում անդրադարձել է լեզվական գիտակցության մակարդակների վերլուծությանը (8):

Այսպես.

- **Ազգային մշակութային մակարդակը** լեզվական գիտակցության այն մասն է, որը կապված է անձին շրջապատող աշխարհի «ազգային» (էթնոազգային) պատկերացման հետ, որը դրսևորվում է լեզվաբանության, քերականության, ոճաբանության մեջ: Այս մակարդակում անհատի կողմից սեփական ազգի լեզվական գիտակցության յուրացումով են որոշվում նրա աշխարհայացքը և խոսքային հաղորդակցման առանձնահատկությունները, որոնք ուղղորդում են նրա մշակութային ինդենտիֆիկացիան և նպաստում «բնական» էզոցենտրիզմի զարգացմանը:

- **Սոցիալ-մշակութային մակարդակում** լեզվական գիտակցությունը ֆիկսում է տիպիկ պայմաններ և իրավիճակներ, որոնք կապված են հաղորդակցվողների սոցիալական կարգավիճակի հետ. մարդը դրանք յուրացնում է և կենտրոնանում է դրանց վրա՝ մտնելով խոսքային հաղորդակցման մեջ, յուրացնելով տարբեր սոցիալական դերեր:

- **Անհատական հոգեբանական մակարդակը** կապված է կանկրետ հաղորդակցական իրավիճակներում անհատի խոսքային գործունեության հետ, երբ խոսողը տիրապետում է լեզվի բազմամակարդակ միավորների լայն սպեկտրի և կիրառում դրանք՝ ելնելով անձնական նպատակներից:

Եվ վերջապես կարելի է խոսել անհատական լեզվի մասին (իդեոլեկտ), որը ձևավորվում է անհատի ձևավորման գործընթացում (3):

Այս մակարդակների փոխազդեցությունով է պայմանավորված լեզվական սոցիալականացման գործընթացի ուղղվածությունը, որի արդյունքում կարելի է խոսել անձնավորության՝ որպես լեզվական անհատի կայացման մասին:

Այսպիսով լեզվական սոցիալականացման գործընթացը դրսևորվում է դիս-

կուրսի անհատական հաղորդակցական խոսքի միջոցով: Սակայն, ժամանակակից լեզվաբանության տեսանկյունից, անհատական դիսկուրսների կայացման գործընթացների հետազոտման համար բոլոր հնարավոր կողմնորոշիչների բացահայտումը անհրաժեշտ է, քանի որ դրա համար անհրաժեշտ է հաշվի առնել չափազանց շատ փոփոխական գործոններ (ժամանակաշրջանի ոճային եղանակից սկսած, մինչև կոնկրետ իրավիճակներում, կոնկրետ մարդկանց փոխհարաբերությունները և այլն): Ելակետային կարող է լինել միայն անդրադարձը՝ միջանկյալ սոցիալ-մշակութային մակարդակին, որտեղ առավելագույնս դրսևորվում է խոսքային հաղորդակցման սոցիալական բնույթը:

Իրականում հաղորդակցական իրավիճակի մասնակիցները կարող են դիտվել որպես այս կամ այն սոցիալական հասարակության ներկայացուցիչներ, որոնք բնորոշ է տվյալ անհատի սոցիալական հաղորդակցման ձևը, սահմանը որոշող դիսկուրսի որոշակի տիպը:

Ժամանակակից լեզվամշակութաբանությունը առանձնացնում է դիսկուրսի հետևյալ տիպերը.

- **Անձնկողմորոշիչ դիսկուրս**, որը կապված է կենցաղայինը գործածական շփման հետ և իրենից ներկայացնում է դիսկուրսի գեներտիկական սկզբնական ձևը:

- **Դիրքակողմնորոշիչ դիսկուրս**, որի օգնությամբ որոշվում են նախ և առաջ հաղորդակցման ինստիտուցիոնալ խնդիրները, որոնք կողմնորոշված են ստեղծված սոցիալական ինստիտուտների սահմաններում, սոցիալական փոխհարաբերությունների պրակտիկայի վրա:

- **Ինստիտուցիոնալ դիսկուրս**, որը անհատին հնարավորություն է տալիս յուրացնել և իրականացնել իր դիրքադերային հնարավորությունները այն սոցիալական ընդհանրության ենթատեքստում, որտեղ նա մտնում է տարիքային զարգացման գործընթացում: Օրինակ. Վ. Ի. Կարասիկը նշում է, որ «ընտանեկան դիսկուրսին» «բազային զույգ» են համարվում ծնողները և երեխան, մանկավարժական դիսկուրսինը՝ ուսուցիչը և աշակերտը և այլն: Ենթադրվում է, որ ինստիտուցիոնալ դիսկուրսի կատեգորիաների նման մշակվածությունն ավելի է նպաստում լեզվական սոցիալականացման ընկալմանը:

Սոցիալ-մանկավարժական տեսակետից մեկնաբանվել են ինստիտուցիոն դիսկուրսի լեզվաբանական բնութագրերը, որոնք բնորոշ են ավելի տիպիկ սոցիալական ինստիտուտների համար, ինչպիսիք են ընտանիքը, դպրոցը, հասակակիցների խումբը: Ակնհայտ է, որ նշված սոցիալական ինստիտուտներից յուրաքանչյուրը բնութագրվում է ինստիտուցիոնալ դիսկուրսի որոշակի տիպով և յուրաքանչյուրում լուծվում են խոսքային հաղորդակցման զարգացման որոշակի խնդիրներ:

Դիտարկենք նման մոտեցման հնարավորությունները ընտանիքի օրինակով: Ինչպես հայտնի է՝ ընտանիքը առաջին կարևոր սոցիալական ինստիտուտն է, որտեղ իրականացվում է երեխայի առաջնային սոցիալականացումը: Այստեղ է, որ երեխային մատչելի գործունեության տեսակների հիման վրա, յուրացվում են հիմնական կարողություններ և արժեքներ, ձևավորվում է նախնական հաղորդակցական, խոսքային փորձը: «Ընտանեկան լեզվի» առանձնահատկությունները կապված են ընտանիքի կարգավիճակի հետ՝ որպես փոքր սոցիալական խմ-

բի, որի համար բնութագրական է երկարատև հուզական հարաբերությունների առկայությունը:

Սոցիալ-լեզվաբանության տեսանկյունից ընտանեկան լեզուն իրենից ներկայացնում է կենցաղային դիսկուրս՝ որպես անձնային կողմնորոշիչ դիսկուրսի տարատեսակ:

Ըստ Լ. Ա. Կապանաձեի (4, 5)՝ ընտանեկան լեզուն ռեալիզացնում է հաղորդակցական խնդիրներ, որոնք առաջանում են այդ փոքր սոցիալական խմբի անդամների ընդհանուր փորձի հիման վրա, որին բնորոշ է «ներընտանեկան խոսակցությունների» յուրօրինակ ժանրը, ինչը ներառում է մասնավորապես խոսքային հաղորդակցման որոշակի ծիսականացում, լեզվական խաղերի կիրառություն և այլն: Այս դեպքում «ընդունված գործառնական ստանդարտներից շեղվելու անհատական ամպլիտուդան շատ մեծ է» (4, էջ 101): Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ անհատական հաղորդակցական խոսքային բնութագրիչները հիմնավորվում են հենց ընտանիքում:

Հատկապես, մեծ դեր ունի «մայրական լեզուն»՝ վաղ տարիքի երեխայի հետ հաղորդակցման ընթացքում (10): Այդ լեզուն՝ իր ձևով և բովանդակությամբ, պետք է նպաստի երեխայի հասարակության ադապտացմանը և հարմարեցված լինի երեխայի հնարավորություններին: Այստեղ գոյություն ունի որոշակի վտանգ: «Մանկական վարվելակերպի» պահպանումը հետագա տարիքային փուլերի ընթացքում, ինչպես նաև ընտանեկան դիսկուրսի ինքնավարությունը նախադրյալներ են ստեղծում անհատի խոսքային հաղորդակցական փորձի սահմանափակմանը և բարդությունների ձևավորման հավանականության մեծացմանը: Հիմնականում նման խնդիրներ առաջանում են դպրոց ընդունվելուց:

Սոցիոլեզվաբանության մեջ այն ստացել է **լեզվական անբավարարվածություն** անվանումը, ընդ որում՝ այդ անբավարարվածությունը կարող է լինել երկու բնույթի: Քաղաքաբնակ ընտանիքում կիրառելի որոշակի լեզվական անբավարարվածությունը կարող է կապված լինել ընտանեկան դաստիարակության ոչ արդյունավետ ոճերի հետ, որոնք բերում են երեխայի երեսառածությանը և նրա մանկամտությանը: Այդ դեպքում երեխայի հետ հաղորդակցման ժամանակ լեզուն կրում է մանկակենտրոն կողմնորոշում և երեխան, երբեմն ունենալով զարգացման խոսքային հնարավորություններ, չի յուրացնում համապատասխան դիսկուրսները, որոնք անհրաժեշտ են մյուս սոցիալական ինստիտուտների սահմաններում փոխազդեցությունների ժամանակ:

Այլ բնույթի լեզվական անբավարարվածություն է դրսևորվում ցածր սոցիալական դիրքի ընտանիքներում (երբեմն լրացուցիչ ազդակ է հանդիսանում բիլինգվիզմը կամ երկնշակույթը՝ միգրանտների միջավայրում):

Որպես օրինակ կարող են ծառայել մի քանի տասնամյակ առաջ ԱՄՆ-ում անցկացված հետազոտությունները, որոնք ցույց տվեցին, որ ցածր սոցիալական կարգի ընտանիքի երեխաները տիրապետում են միայն աղքատ խոսակցական լեզվին «փողոցի լեզվին» (restricted code), ինչն իջեցնում է դպրոցական ուսուցման պատրաստվածության մակարդակը, միևնույն ժամանակ միջին դասաբաններից դուրս եկածները տիրապետում են նաև նորմատիվ լեզվին (elaborated code), ինչպես նաև ընդունակ են անհրաժեշտության դեպքում հեշտությամբ կիրառել փոխարկումը, ինչն անկասկած բարձրացնում է դպրոցական ուսուց-

ման պատրաստվածության մակարդակը:

Այդ պատճառով ընտանիքում խոսքային հաղորդակցման զարգացման սոցիալ-մանկավարժական խնդիր է՝ պահպանելով անհատականացման որոշումը, ձևավորել նորմատիվային խոսք և հաղորդակցման միջոցներ, այլ կերպ ասած, ապահովել անցման հնարավորությունները կենցաղայինից ինստիտուցիոնալ դիսկուրսի համապատասխան ձևերին:

Ժ. Պիաժեն 1929թ-ին հրատարակեց մի աշխատանք, որը վերաբերում էր խոսքի գործառույթների զարգացման խնդիրներին: Գիտակցության զարգացման ընդհանուր տեսության համաձայն Պիաժեն առանձնացնում է սոցիալականացված խոսքը, որը հաղորդակցական գործառույթ է կատարում, և էզոցենտրիկ խոսքը, որը հաղորդակցական գործառույթ չի կատարում, և խոսք է իր համար: Պիաժեի տեսանկյունից էզոցենտրիկ խոսքը գերակշռող դեր է կատարում փոքր տարիքում և աստիճանաբար ճնշվում է սոցիալական ձևերով: Այդ ճնշումը կատարվում է երեխայի՝ մեծերի սոցիալականացված մտքին հարմարվելու շնորհիվ: Էզոցենտրիկ խոսքի հետազոտություններ են անցկացվել Ս. Մուխոմի, Դ. և Ռ. Կացի Մակ-Կարտինի և Դեյի կողմից, որոնք էզոցենտրիկ մի բավականին ցածր ցուցանիշ են ստացել (33-1,3 %) (11):

Դա թույլ է տալիս մտածել, որ էզոցենտրիկ մի արտահայտությունը տարիքային զարգացման ոչ պարզ գործառույթ է, և որ դրա վրա որոշիչ դեր է կատարում կյանքի սոցիալական պայմանների ազդեցությունը: Շրջապատողների հետ հարաբերություններում, ըստ Պիաժեի, էզոցենտրիկ մի նվազման 2 փաստարկ կա. երեխայի և նրա ընկերների միջև հետաքրքրությունների ընդհանրությունը և մեծերի ազդեցության ինտենսիվությունը: Պիաժեի համար էզոցենտրիկ խոսքի գիտակցությունը աճում է նորածնի աուտիզմից, նրա ուղղվածությունից դեպի սեփական ներքին անհանազատությունները և վիճակները, սա աուտիզմից սոցիալականացման անցումային փուլ է:

Ըստ Պիաժեի, էզոցենտրիկ խոսքն առաջանում է նախնական անհատական խոսքի ոչ բավարար սոցիալականացումից: Դրան հակառակ Լ. Ս. Վիգոտսկին առաջ է քաշում խոսքի նախնական սոցիալականացման տեսությունը, անհատական խոսքում առանձնացման արդյունքում էզոցենտրիկ խոսքի առաջացման արդյունքում:

Որոշելու համար, թե այս 2 մտքերից որն է ճիշտ, Վիգոտսկին գիտական հետազոտություն է կատարել, որը նպատակ ուներ պարզելու, թե էզոցենտրիկ խոսքի վրա ի՞նչ ազդեցություն կունենան իրավիճակի սոցիալական էլեմենտների թուլացումն ու ուժեղացումը: «Եթե երեխայի էզոցենտրիկ խոսքը,- գրում է Վիգոտսկին,- բխում է նրա մտավոր էզոցենտրիկից և ոչ բավարար սոցիալականացումից, ապա սոցիալական տարրերի ցանկացած թուլացում նպաստում է երեխային կոլեկտիվից առանձնացմանը, նրա հոգեբանական մեկուսացմանը, ցանկացած օգնություն (աջակցություն) և հոգեբանական շփման բացակայությունը այլ մարդկանց հետ, ցանկացած ազատում՝ մյուսների հետ անհրաժեշտ հարմարվողականությունից և անհրաժեշտ սոցիալականացված խոսքից օգտվելը, անպայման կհանգեցնեն էզոցենտրիկ խոսքի, սոցիալականացված խոսքին գործակցի բարձրացման: Այս ամենը կստեղծեն բարենպաստ պայմաններ երեխայի ոչ բավարար սոցիալականացման բացահայտման համար:

Եվ ընդհակառակը, եթե էզոցենտրիկ խոսքը բխում է նախնական սոցիալական խոսքի ոչ բավարար անհատականացումից, ուրիշին ուղղած խոսքն իր համար առանձնացնելու անկարողությունից, ապա սոցիալական իրավիճակների թուլացումը կնպաստի էզոցենտրիզմի անկմանը»:

Գիտափորձի սկզբում իրավիճակի սոցիալական պահերի թուլացման համար երեխաներին ներառել են կամ չխոսող՝ խուլ-համր, կամ օտար լեզվով խոսող երեխաների կոլեկտիվ: Փորձերը ցույց են տվել, որ ընկալման հնարավորության բացառման դեպքում էզոցենտրիզմի ցուցանիշը մեծամասամբ փորձերում հասնում է 0-ի, իսկ մյուսներում կրճատվում է միջինը 8 անգամ:

Փորձերի երկրորդ մասում սոցիալական պահերի թուլացումը հասցվել է նրան, որ երեխան ներառվել է իրեն բոլորովին անծանոթ երեխաների միջավայր կամ երեխաներից մեկուսացվել (այլ սենյակ, անկյուն, սեղանի շուրջ), որտեղ նա պետք է աշխատեր կոլեկտիվից անկախ, բոլորովին մենակ և առանց փորձարկողի օգնության: Ցածրացման ընդհանուր միտումը պարզ նկատելի էր: Փորձերի երրորդ մասում բացառվել է խոսքի վոկալացման հնարավորությունը: Երեխային կամ նստեցնում էին մյուսներից հեռու կամ լսարանի պատերից դուրս աղմուկ էին հնչեցնում, որը բոլորովին խլացնում էր երեխայի ձայնը: Հայտնաբերվեց էզոցենտրիզմի գործակցի իջեցում: Այս փաստերը Վիգոտսկուն բերեցին այն եզրակացության, որ էզոցենտրիկ խոսքն իր բնույթով սոցիալական է, բայց որը դեռ վերջնականապես չի առանձնացել սոցիալական խոսքից՝ որպես խոսքի յուրօրինակ ձև:

Ըստ Պիաժեի էզոցենտրիկ խոսքը ոչ մի ռեալ ֆունկցիա չունի երեխայի գործունեության մեջ՝ համարվելով նրա զուգակիցը, որը ոչինչ չի ներդնում գործունեության ընթացքի մեջ: Բնական է, որ այդպիսի անպետք գործառույթը անկում է ապրում: Դրա մասին է վկայում նախադպրոցական տարիքի վերջում էզոցենտրիզմի գործակցի անկումը (9):

Լ. Ս. Վիգոտսկին, Ա. Ռ. Լուրիայի, Ա. Ն. Լեոնտևի, Ռ. Ե. Լևինայի հետ համատեղ անց է կացրել հատուկ փորձնական հետազոտություն, որը պարզում է էզոցենտրիկ խոսք առաջացնող պատճառները: Դրա համար փորձնականորեն ստեղծում են բարդություններ՝ մանկական գործունեության ազատ ընթացքի մեջ: Հետազոտությունները ցույց են տվել, որ էզոցենտրիզմի գործակիցը գործունեության բարդացված ընթացքում 2 անգամ աճում է այն գործակցի համեմատ, որն առանց դժվար իրավիճակի էր դուրս բերվել:

Այս հետազոտությունների հիման վրա Լ. Ա. Վիգոտսկին գալիս է այն եզրակացության, որ «ըստ երևույթին էզոցենտրիկ խոսքը մանկան ակտիվության անմիջական աջակիցն է, շատ հեշտությամբ դառնում է մտավոր միջոց, այսինքն՝ սկսում է կատարել վարքագծում խնդրի լուծման պլան կազմելու գործառույթ» (1): Նա գտնում է, որ էզոցենտրիկ խոսքը չի անհետանում, այլ վերածվում է ներքին խոսքի: էզոցենտրիկ խոսքի գործունեության տարբեր ձևերի հետ կապի մասին հարցը դրված էր Վ. Ե. Սիրկինայի (12) հետազոտություններում, որը հետազոտել է էզոցենտրիզմը, մի կողմից, կախված հաղորդակցման տարրական պայմաններից, մյուս կողմից՝ գործունեության բնույթից: Դրանով չափվել են էզոցենտրիզմի գործակիցները անծանոթ փորձարկվողի հետ հաղորդակցման ժամանակ, անծանոթ և ծանոթ երեխաների հետ հաղորդակցման իրավիճակում:

Այս բոլոր 3 իրավիճակներում չափվել է էզոցենտրիզմի գործակիցը ազատ նկարելու և գործնական առաջադրանք լուծելու ժամանակ:

Այսպիսով, որքան մեծ է հաղորդակցվելու հնարավորությունը, այնքան ցածր է էզոցենտրիզմի գործակիցը: Այս եզրակացությունը հակասում է Վիգոտսկու տվյալներին, ըստ որի հաղորդակցման հնարավորության թուլացումը (ընկալման բացառումը, թիմային մենախոսության և վոկալիզացիայի հնարավորության բացառումը) հանգեցնում է էզոցենտրիզմի գործակցի նվազման: Բայց այդ հակասությունը միայն թվացյալ է: Վիգոտսկու փորձերում երեխայի հաղորդակցման համար ստեղծվում էին հնարավոր բոլոր խոչընդոտները, այսինքն հաղորդակցվելու հնարավորությունը բացառվում կամ բարդեցվում է:

Նախադպրոցական երեխայի մոտ անկասկած մեծ է մեծերի հետ հաղորդակցվելու հակումը, սակայն «օտար մեծի» ներկայությամբ իրավիճակը պայման չի ստեղծում դրա իրականացման համար: Համագործակցության և հաղորդակցվելու հակումը դրա իրականացման ներքին պայմանի բացակայության դեպքում բերում է էզոցենտրիզմի բարձր ցուցանիշների: Էզոցենտրիկ խոսքի դերի աստիճանական նվազումը կապված է երեխայի ինքնուրույնության աճի հետ: Պարզ է նաև էզոցենտրիզմի ավելացումը գործունեության բարդությունների ժամանակ, որը կապված է մյուսների հետ համագործակցելու հակման բնական աճի հետ:

Այսպիսով, հաշվի առնելով, որ խոսքային զարգացման հապաղումներ ունեցող երեխաների սոցիալականացումը սերտորեն կախված է խոսքային զարգացումից, իսկ այս համատեքստում՝ էզոցենտրիկ և սոցիալական խոսքի զարգացումից, մենք փորձել ենք պարզել դրանց զարգացման փուլերն ու փոխկապվածության առանձնահատկությունները: Դրա համար դիտարկվել են Լ. Ս. Վիգոտսկու, Ժ. Պիաժեի, Ա. Ն. Լեոնտևի, Ն. Ե. Սիրկինայի հետազոտությունները, որոնցում փորձ է արվում բացահայտելու երեխայի էզոցենտրիկ և սոցիալական խոսքի զարգացման միտումները:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Выготский Л. С.** О природе эгоцентрической речи // Хрестоматия по общей психологии. Психология мышления / под ред. **Ю. Б. Гиппенрейтер, В. В. Петухова.** М., МГУ, 1981. С. 176–183.
2. **Караулов Ю. Н.** Русская языковая личность и задачи ее изучения /**Ю. Н. Караулов** /Язык и личность /Под редакцией **Д. Н. Шмелева.** М.,1989. С. 3-10.
3. **Карасик В. И.** Языковой круг: личность, концепты, дискурс /**В. И. Карасик.** М., Гнозис, 2004, 390с.
4. **Капанадзе Л. А.** Семейный диалог и семейные номинации /**Л. А. Капанадзе**/ /Язык и личность/ Под ред. **Д. Н. Шмелева.** М.,1989. С. 100-106.
5. **Кукушкина Е. Ю.** /Домашний язык/ в семье /**Е. Ю. Кукушкина,** Язык и личность /Под ред. **Д. Н. Шмелева.** М.,1989. С. 96-100.
6. **Маслова В. А.** Лингвокультурология: Учеб. пособие /**В. А. Маслова.** М., Изда. центр /Академия/, 2001, 208с.
7. **Мудрик А. В.** Социальная педагогика. М., 2007. С. 3-20.
8. **Нечаев Н. Н.** Формирование коммуникативной компетенции как условие становления профессионального сознания специалиста /**Н. Н. Нечаев, Г. И.**

Резницкая/ /Вестн.УРАО. 2002. N1. С. 3-21.

9. **Пиаже Ж.** Эгоцентрическая речь//Жан Пиаже: теория, эксперименты, дискуссии. Сб. статей/сост. и общ. ред. **Л. Ф. Обуховой, Г. В. Бурменской.** М., Гардарики, 2001. С. 41 – 46.

10. **Цейтлин С. Н.** Язык и ребенок. Лингвистика детской речи: Учеб. пособие, М., Гуманит. изд. Центр /ВЛАДОС/, 2000, 240 с.

11. (<http://modeler.if.ua>)

12. (<http://psicom.ru/index165.html>):

## **ВЗАИМОСВЯЗЬ СОЦИАЛИЗАЦИИ ЛИЧНОСТИ И РАЗВИТИЯ РЕЧИ**

**А. ДАВТЯН**  
**А. ХАЧАТРЯН**

Развитие речи и социализации личности тесно взаимосвязаны. Мы попробовали выяснить этапы и особенности взаимосвязанности. По этому поводу важно изучение исследований психологии личности и развития речи, что дает возможность раскрыть связь между причинами и последствиями задержки развития речи и социализации. Этим мы можем содействовать эффективному развитию речи и социализации ребенка.

## **INTERCONNECTION BETWEEN THE SOCIALIZATION OF AN INDIVIDUAL AND THE SPEECH DEVELOPMENT**

**A. DAVTYAN**  
**A. KHACHATRYAN**

The socialization of an individual and the speech development are closely interconnected. We try to clear up the development of their stages and the peculiarity of interconnection, so the investigation of the development between the individual and the spirituals is very important. This will give the opportunity to reveal the detention of development of speech and socialization and the connection between reason and consequence. Thus, we can promote to the effective socialization and speech development of the child.

## **ДВИЖУЩИЕ СИЛЫ И УСЛОВИЯ ПСИХИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕБЕНКА**

**М. АСЛАНИШВИЛИ**  
*Психолог-профессор,*  
*Телавский Государственный Университет им. Я. Гогебашвили*

Основным движущим механизмом развития психики животных представляет, утвержденная биологически, передача наследственного опыта, на основе которого осуществляется приспособленность животных с окружающим миром. Психическое развитие человека протекает с помощью ре-